

Քրի պահպանված մասի երկարությունը 40 սմ է, լայնությունը՝ 5 սմ: Հայտնաբերվել են նաև երկաթե միասայր գանակներ և գործվածքի մի պատառիկ, որը կարասի մեջ մուգ կանաչ գույնի էր, իսկ հանելուց սկսեց գունազրկվել և մոխրանալ, այնուամենայնիվ, մեզ հաջողվեց պահպանել այն: Կարասներից երրորդում պարզորոշ նկատվեց, որ աճյունն ամփոփված է եղել նրստեցրած զիրքով: Նրա ձախ կողմում, ոտքերի

մոտ դրված էր մեկ երկկանթ կճուճ և փոքրիկ թաս: Կթիչ: գորշագույն է, անզարդ, բարձրությունը հավասար է 30 սմ-ի: Մյուս կարասները ջարդված էին, դրանց մեջ հայտնաբերվեցին փոքրիկ կավանոթների բեկորներ և մարդկային կմախքի ոսկորներ: Հայտնաբերված միկարասյան թաղումը վերաբերում է մ. թ. ա. V—III դարերին:

ՅՈՒ. ԱՍԲՅԱՆ (Ստեփանակերտ)

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒ ՎՐԱ ԲՈՒՂԱՐԻԱՅՈՒՄ

Քրթական տիրապետության շրջանին Պուլ-կարիո մեջ գոյություն ունեին բազմաթիվ հայ գաղութներ: Անոնցմե հասած են մինչև այսօր կարգ մը գրավոր հիշատակարաններ, որոնք կուտան հետաքրքրական տեղեկություններ պուլ-կարահայ անցյալի մասին և մասնավորապես լույս կսփռեն անոնց նյութական մշակույթի վրա այս շրջանին ընթացքին:

Հետաքրքրական են մի քանի մարմարյա սալեր՝ զետեղված ժամանակին աղբյուրներու վրա հայկական արձանագրություններով: Անոնցմե շորսը երկլեզվյան են՝ հայերեն և թուրքերեն, այլ մեկը միայն՝ հայերեն:

1. Մարմարյա սալ հայ-թրքական արձանագրությունով 1740-են, Վառնայեն:

Սալը առնված է իբրև ավար ռուսական բանակեն 1828—1829 թթ. ռուս-թրքական պատերազմի ընթացքին, Վառնայի բերթին գրավումեն հետո: Նախ սալը կգտնվեր ռուս զորավար Պ. Ա. Գոգենի քով, բայց հետո փոխադրված է Պետերբուրգի Տավրիկյան պալատը: 1850-ին կայսրը Նիկոլայ I-ի հրամանով ճարտարապետ Մոնիկեթի սկսած է կառուցանել բաղնիք մը Պուլ-կին քաղաքի Եկատերինյան պարտեզի մեջ: Մահմետական մըզկիթի նմանության պատճառով զայն անվանած են «թրքական բաղնիք»: Անոր վրա զետեղված են մի քանի թրքական արձանագրություններ, որոնց միջև և Վառնայի սալը: Հայրենական պատերազմի ընթացքին (1941—1945) շինությունը վնասված է, բայց Վառնայի արձանագրությունը պահպանված է:

Քրթական արձանագրությունը, որ կղանազանվի իր բանաստեղծական պարունակությունով, հետևյալն է.

«Ուզունօղլուն իր ջանքերով ալը այստեղ

հոսեցուց: Ով որ բարիք կգործե իր առատաձեռնությամբ թող արժանի ըլլա քաղության և գթության: Անոր ալը թող ցույց տա արդարության ուղին, անոր աղբյուրը թող ճշմարիտ հավատ ստեղծե, անոր ամեն մեկ ծորակը գթության աղբյուր ըլլա, հագեցնելով ծարավները: Խանելով երեք ըսինք տարին: Նմենք որովհետև դրախտի ջուր հոսիլ է: 1153»²:

Վերջընթեր տողը կներկայացնե ժամանակագրություն մը, այսինքն տառերու թվական նշանակությունեն երեք պակսեցնելով կհավասարի աղբյուրի կառուցման թվականին, որ է 1153 (1740)³:

Քրթական արձանագրության տակ կգտնվի երեքտողեա հայկական արձանագրություն մը.

«Յիշատակ է ախբուրըս արեւելցի մահտեսի Նազարին

թվի [ի] ն ՌՃԶԹ օթոստ [ո] սի ր-ին»:

Կապգիրներ. ա-կ, մ-ա՝ առաջին տող, ա-ր, ե-ւ, ի-ն՝ երկրորդ տող, թ-վ, ս-ի, ի-ն՝ երրորդ տող:

Արձանագրությունը հավանաբար կգտնվի եղեր Վառնա քաղաքին մեջ գտնվող աղբյուրի մը վրա, որ շինված է եղեր քաղաքին մեջ բընակող հայազգի մահտեսի Ղազար Ուզունօղլունի:


2. Վելիքի Բրեսլավի թանգարանի պահանքին մեջ կգտնվի հայերեն և թուրքերեն արձանագրությամբ մարմարյա սալ մը: Ունի

² А. Векилов, նշվ. աշխ., էջ 73—


³ Նույն տեղում, էջ 74:

⁴ Ա. Վեքիլովը (հիշ. հոդվ., էջ 75) կկարծե, որ աղբյուրը շինուած է Ուզունօղլուի նյութական միջոցներով և թի մահտեսի Նազարը միայն աղբյուրի կառուցանող վարպետն է: Մենք կկարծենք, որ Ուզունօղլուն և մահտեսի Նազարը միևնույն անձն են, այսինքն Ուզունօղլուն՝ մահտեսի Նազարին մականունն է:

¹ См. А. П. Векилов, О турецких эпиграфических памятниках в городе Пушкине, «Эпиграфика востока», XIII, 1960, էջ 71—75.



Նկար 1



Նկար 2

հարթ-կլոր ձև և հետևյալ չափերը. բարձրություն՝ 0,53 մ. լայնություն՝ 0,31—0,34 մ և հաստություն՝ 0,07 մ: Սալի երեսին կողմը կան 6 տողնոց հայերեն, իսկ անոր տակը՝ 3 տողնոց թուրքերեն արձանագրություններ: Երկու արձանագրություններու տառերն ալ ուղուցիկ են: Տողերը իրարմե ղատված են ուղուցիկ գծերով: Ամենեն վերի տողին մեջ կա զարդաքանդակ մը, որ կներկայացնէ արեւը՝ մարդակերպ գծերով: Հայ տառերու բարձրությունը է 3,5 սմ: Հայկական արձանագրությունը.

«Թվ[իկ] ՌՄԻԴ (1224—1275)

Յիշատակ է. աս ախ-

բուրն. Քոսքոսի.

որդի. մահտէսի

Ակօբին Գ. իւանու-

թ. վախրֆ. ախբու[ր]

Կապգիր. թ-վ՝ առաջին տողը:

Թրքական արձանագրությունը.

„Sahib-ve malik Koskos oğlu hacı Agob

ic düken mülk çeşme vakıf olmuştur sene 1189 (=1775):

Սալը զետեղված էր բրնձավ քաղաքի աղբյուրին մը վրա, իսկ անոր փլցումեն ետք պահված է քաղաքին հնագիտական թանգարանը:

Աղբյուրին բարերարը՝ մահտեսի Ակօրը, Շումենի հայ գաղութեն էր: Իր անվանը կհանդիպինք անոր որդիին տապանաքարին վրա. «Ջաքար որդի Գոսգոսենց հաճի Ակօրին»⁵:

3. Մինչև մոտ ժամանակ, Տիվտյատովո (Չենկել) գյուղի մեջ (Շումեն քաղաքի մոտ) կգտնվեր քարաշեն աղբյուր մը՝ «Голямата чешма» անունով: Անոր վրա զետեղված էին երկու մարմարյա սալեր հայկական և թրքական արձանագրություններով:

Ա. Սալ հետևյալ չափերով. 0,50×0,30 մ (նկ. 1): Սալի վերի կես մասին վրա կգտնվի երկու տողնոց ուղղակի թրքական արձանագրություն մը, իսկ վարի կեսին վրա ալ երեքտողնոց փորաքանդակ հայկական արձանագրություն: Հայկական տառերու մեծությունը 3,4 սմ է:

Թրքական արձանագրությունը.

„Sahib ül-hayrat vel-hasenat Aci Kirko-roolu Aci Agop sene 1198“ (=1783).

Հայկական արձանագրությունը:

«Յիշատակ է մ[ա]հտ[եսի] Գիրիքոր որդի մ[ա]հտ[եսի] Ակօրին թվին ՌՃՂԸ (= 1783)

որ հանգ[ի] պի ասեն Ա[ստված] [ողորմի հոգուն]»

Կապգիրներ. ո-ր, պ-ի՝ երրորդ տողը:

Բ. Սալ 0,52×0,285 մ. չափերով (նկ. 2): Երեսի մասին վրա փորագրված են հինգ տողնոց արձանագրություններ, առաջին տողը՝ թուրքերեն, մնացածները՝ հայերեն: Հայկական տառերու մեծությունը՝ 1,8—5,3 սմ:

Թրքական արձանագրությունը.

„Sahib ül-hayrat Hacı Magirdiç ben Murad“.

Հայկական արձանագրությունը.

«Մահտեսի Ակօրի որդի

Մուրատ Աղային որդի մ[ա]հտ[եսի] սի

Մկրտիչ Աղան նորոգեց Աղբ[ու]րս

1291 Յիշատակի: 1874»:

Վերագծված արձանագրություններեն կտեղեկանանք, որ մահտեսի Ակօրը բարերար է

5 S⁶ A. Маркос, Арменската колония в Шумен през XVII—XIX век, «Известия на Народния музей», Шумен, IV. 1967, т. 105 и 106, нк. 2:

6 Թրքական արձանագրությունները հրատարակված են. տե՛ս П. Миятев, Епиграфические проучвание на паметници с арабско писмо в България, сп. Археология, год. IV, 1962, кн. I, т. 71:

1783-ին Տիվտյատովո աղբյուրին, իսկ իր թոռը՝ մահտեսի Մկրտիչ Աղան նորոգած է նույն աղբյուրը 91 տարի հետո. 1874-ին: Այս գերդաստանը Շումենի մեծահարուստներեն էր: Անոնց անունները կհիշվեն XIX դ. քանի մը հյուսիսեւրոպական տակ որպես վկաներ⁷:

4. Մարմարյա սալ, քառակուսի, կապակսի վերին մասը: Պահպանված մասի բարձրությունը՝



Նկար 3

նը՝ 0,24 մ. լայնությունը՝ 0,27 մ, հաստությունը՝ 0,045 մ (նկ. 3): Սալը կապահանվի Սոֆիայի Աղգային հնագիտական թանգարանը, ինվ. № 427: Սալաքարը նվիրված է Սթանիսլաքայի (ներկայիս Ասենովգրադ) քաղաքի հույն համայնքին 1898-ին⁸:

Երեսի կողմը ունի ուղղակի շրջանակ մը, որի մեջ պահպանված է հինգ տողնոց փորագրված հայկական արձանագրություն մը: Տողերը բաժանված են հորիզոնական կտրուկ փորագրված մեջմեկ տողերով: Տառերու մեծությունը 2—3 սմ է:

«Յիշատա-]

կ է ախպո-

ւրս Շոռ-

օթ[ե]ցի: Հապ-

ումի որդի Ու-

անին սոյստ (?)»:

Կապգիրներ. մ-ի, դ-ի՝ հինգերորդ տողը, ն-ի՝ վեցերորդ տողը:

Առաջին տողի վերահաստատությունը ապահովարարար է: Անորոշ կմնա վեցերորդ տողի

7 S⁶ A. Маркос, նշվ. աշխ., էջ 111 և 112:

8 Շնորհակալություն կհայտնենք թղթակից-անդամ, պրոֆ. Վեսելին Պեշկևիկին, որ եղավ մեր ուղարկությունը այդ արձանագրությանը վրա դարձնողը:

վերջին հինգ տառերու իմաստը: Շատ հավանաբար կրճատված բառերու տեղ դրված է: Ինչ որ կվերաբերի թվականին, նկատի առնելով իր հնա-

գիտական մասնահատկությունները, կարելի է պնդել, թե XVII—XVIII դարեն է:

ԱՐԱ ՄԱՐԿՈՍ (Վառճա)

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՄԻ ՆՈՐ ԲՆԱԳԻՐ

Ագաթանգեղազի տոմարյան պատմության մեջ մի նոր հետաքրքրական հայտնագործություն է վերջերս Փարիզի «Հայկական ուսմանց հանդեսի» VIII հատորում լույս տեսած «Հայոց կաթողիկոս սուրբ Գրիգորի վարքը»՝ արաբերեն բնագրով և համապատասխան ուսումնասիրության վրա: Այս շնորհակալ աշխատանքը կատարել է բելգիացի հայագետ Մ. վան էսբրոեքը¹:

Դեռ 1913 թ. քրիստոնյա արաբական մատենագրության լավագույն գիտակ Գ. Գրաֆը հակոբիկ ասորիների Երուսաղեմի սուրբ Մարկոս վանքի ձեռագրերի ցուցակում նշել է, որ 72 թվահամարով ձեռագրի մեջ կա «Հայաստանի կաթողիկոս սուրբ Գրիգորի վարքը»: Դա 125 հատվածներ պարունակող մի գրչագիր է, բաղկացած 745 էջից, որի 479—488 երեսները պարունակում են Գրիգորի վարքը՝ գրված ասորաձև արաբերեն (քարշունի)²: Սա թարգմանված է ասորերենից հայեպի Բեշարա վանականի ձեռքով, որը Մերզիների մոտ գտնվող Գայր-ալ-Ջաաֆարան (հակոբիկ ասորիների կաթողիկոսանիստ) վանքում 1732 թ. փետրվարից մինչև 1733 թ. հունվար աշխատել է այս ձեռագրի վրա: Բարեբախտաբար այնտեղ նշված է, որ սրա նախատիպն է 1178 թ. կողմից ասորական ձեռագիր, որը նույնպես 125 հատված (բնագիր) է պարունակել:

Մ. վան էսբրոեքը մանրամասն քննարկում է սույն բնագիրը, որը հրատարակել է արաբաձև: Նա եզրակացնում է, որ սրա ասորերեն նախատիպը հայերենից է թարգմանված: Մինչև այժմ Ագաթանգեղոսին առնչվող բնագրերից ասորերեն հայտնի էր միայն Ագաթանգեղոսի պատմական նյութի վերաշարադրանքը, Գեորգ Ասորի արաբաց եպիսկոպոսի 714 թ. նամակում, բայց չկար որևէ թարգմանություն կամ ասորական խմբագրություն: Նոր հայտնաբերված ձեռագրից առաջին անգամ հայտնի է դառնում, որ

եղել է մի ասորական խմբագրություն ուղղակի հայերենից թարգմանված և որի արաբերեն թարգմանությունն է միայն մեզ հասել:

Աշխարհի տարբեր մասերում օրեցօր ի հայտ են գալիս Ագաթանգեղոսի նորանոր բնագրեր, մանավանդ արաբերեն և հունարեն: Ագաթանգեղոսի առաջին խմբին պատկանող խմբագրություններն են՝ մեզ հայտնի հայերեն բնագիրը (քննական հրատ. Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանի), հունարեն թարգմանությունը (հրատ. Պ. դը Լագարդ) և, վերջապես, արաբերեն թարգմանությունը (հրատ. Ա. Տեր-Ղևոնդյան) լույս տեսած 1969 թ.: Երկրորդ խմբի մեջ են մտնում այն արաբերեն և հունարեն խմբագրությունները, որոնց հայերեն բնագիրը դեռ չի հայտնաբերված և որոնք բանասիրության մեջ պայմանականորեն հայտնի են «վարք» անվամբ՝ արաբերեն վարքը (հրատ. Ն. Շառ), հունարենը (հրատ. Ժ. Գարիտ), Օբրիդայի վարքը (հրատ. Ժ. Գարիտ), որը լույս տեսավ 1965 թ.: Ահա այս վերջին խմբին է միացնում Մ. վան էսբրոեքը իր հրատարակած քարշունի (ասորաձև արաբերեն) վարքը, թեև Օբրիդայի վարքի (հայտնաբերված Մակեդոնիայի Օբրիդա վանքում) նման այս քարշունի վարքն էլ սերտորեն կապված է թե՛ առաջին, և թե՛ երկրորդ խմբերի հետ:

Իր կառուցվածքով ինքնատիպ է նոր մարքը: Սկսվում է Սանատրուկի ու Թադեոսի պատմությամբ, որը մինչև օրս Ագաթանգեղոսի բնագրերում ընդհանրապես չէր եղել: Ապա շարադրվում է Գրիգորի ու Տրդատի պատմությունը, Հոսիփսիժյանց կույսերի նահատակությունը, Տրդատի պատժվելը, Գրիգորի ելքը Խոր Վիրապից և քրիստոնեության տարածումը Հայաստանում: Այս բոլորը շարադրված է ըստ Ագաթանգեղոսի հայտնի պատմության, սակայն բաց է թողնված ոչ միայն վարդապետությունը ամբողջովին (որն ընդհանրապես չկա օտար թարգմանությունների մեջ), այլև Գրիգորի տեսիլքը: Վերջում նորագույն վարքը հիշում է, որ Դարանաղաց գավառում թաղված Գրիգորի նշխարները Չենոն կայսեր ժամանակ բարեպաշտ հովիվ Ամրայի (ասորերեն նշանակում է Դառնիկ) ձեռքով գտնվում և բերվում են Թորգան, իսկ Հերակ կայսեր ժամանակ այնտեղ մեծ եկեղեցի է կառուցվում:

¹ M. van Esbroeck, Un nouveau témoin du livre d'Agathange, *Revue des Études Arméniennes*, nouv. sér., t. VIII, Paris, 1971, էջ 13—167.

² G. Graf, Die literarischen Handschriften des jakobitischen Markusklosters in Jerusalem, IV, *Hagiographische Literatur Oriens Christianus*, t. 3, 1913, էջ 311—327.